

7 274

ԺԽԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մալբ Արուստիսի և Էջմիածնի

1915

281(91.542)

D-64

281(91.542)

Տ-64 ՄԵ

1 OCT 2009

ԾԽԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

1005
20643



ՎԱՀԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի

1914

Հաստատեմք զայս ծխական կանոնադրուքին
Հայաստանեայց Առաքելական ա. եկեղեցւոյ եւ
ճամբի գործադրութիւն.

Վ Է Ա Բ Վ Ե.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1 նոյեմբերի 1914 թ.

Ս. Էջմիածին

ԾԽԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ


ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ա.

ՀԱՄԱՅՆՔԻ ԾԽԱԿԱՆ ԵՒ ԻՐԱՒԱՍՈՒ.

1. Իւրաքանչիւր եկեղեցու կամ աղօթատան բո-
լոր ծխականները նոյն եկեղեցու կամ աղօթատան
միաբան հոգևոր պաշտօնեաների հետ միասին կազմում
են մի ծխական համայնք:

2. Ծխական են այն անձինք (իրենց ընտանիքով),
որոնք կատարում են եկեղեցու և ծխի վերաբերմամբ
որոշ պարտաւորութիւններ (յօդ. 3) և որոնց անուն-



ներն արձանագրուած են նոյն եկեղեցու կամ աղօթատան յատուկ մատեանում (յօդ. 5.):

3. Ծխականները պարտաւոր են յանձն առնել իրենց եկեղեցու ծխական ժողովի որոշած ծառայութիւնները և մասնակցել եկեղեցական պէտքերի համար պահանջուած ծախքերին:

4. Իւրաքանչիւր անձն կարող է լինել միայն մի եկեղեցու ծխական:

5. Իրաւասու է, այսինքն ծխական ժողովներին մասնակցելու, ընտրելու և ընտրուելու իրաւունք ունի 25 տարին լրացրած իւրաքանչիւր այր ծխական, որի անունն առնուազն երկու տարի, իբրև ծխականի, արձանագրուած է նոյն եկեղեցու կամ աղօթատան յատուկ մատեանում (այդ ժամանակամիջոցում նա համարուում է նոր եկեղեցու ժամաւոր և նախկին եկեղեցու իրաւասու ծխական) և կատարել է իւր պարտաւորութիւնները ծխի և եկեղեցու վերաբերմամբ, ի բաց առեալ՝

Ա. Ով հոգևոր իշխանութեան օրինական դատաստանով զրկուած է այդ իրաւունքից և կամ գտնուում է ապաշխարութեան տակ:

Բ. Ով պետական դատարանով զրկուած է բոլոր իրաւունքներից:

Գ. Ով սովորոյթի իրաւունքով ընդունուած կամ ծխական ժողովից սահմանուած եկեղեցական տուրքերը չէ վճարել (բացի ծխական ժողովի վկայեալ չունեորներից) և որի վրայ ապառիկներ կան:

Բ.

ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

6. Իւրաքանչիւր եկեղեցու կամ աղօթատան իրաւասու ծխականները նոյն եկեղեցու կամ աղօթատան միաբան հոգևոր պաշտօնեաների հետ պաշտօնական հրաւերով (յօդ. 11) համախմբուած կազմում են ծխական ժողով:

7. Ծխական ժողովի իրաւասութեան խնդիրներն են.

Ա. եկեղեցու կամ աղօթատան բարեգարդութեան մասին հոգացողութիւնը (անօթների, զգեստների մատակարարութիւն և այլն):

Բ. Քարոզիչ հրաւիրելը և չերգեցիկ խումբ ու խմբապետ պահելը:

Գ. Քահանայացուների և հոգևոր կոչման մէջ ընդունուելիք եկեղեցական սպասաւորների ընտրութիւնը:

Դ. Ուսումնարաններ, հիւանդանոցներ, աղքատանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ բանալը:

Ե. Ծխական հոգաբարձութիւն (տես յօդ. 37), երեսփոխ և վերաստուգիչ յանձնաժողով ընտրելը և իհարկին չպաշտօնից հեռացնելու որոշումը. շինութիւններ, նորոգութիւններ և այլ գործեր կատարելու համար յատուկ յանձնախմբեր ընտրելը, նրանց գոր-

ծունէութեան քննութիւնը և հաշուառութիւնը, յան-
ցաւորութեան դէպքում նրանց քրէական և քաղաքա-
ցիական դատի ենթարկելու որոշումը:

9. Ծխական համայնքի բարեգործական ու կրթա-
կան գործունէութեան, ել ու մուտքի և գոյքի (շարժա-
կան ու անշարժ) ընդհանուր անօրէնութիւնը:

է. Կալուածներ գնել և վաճառելը (տես 67 յօդ.
ծանօթ.):

Ը. Ծխական տուրքեր սահմանելը:

Թ. Հարկ եղած դէպքերում որոշել և յանձնարա-
րել ծխական համայնքի շահը պաշտպանել պետա-
կան դատարաններում, քրէական և քաղաքացիական
դատեր վարելը երեսփոխի ձեռքով:

Փ. Պատգամաւորներ, ներկայացուցիչներ և անձ-
նափոխանորդներ ընտրելը ծխական համայնքի կող-
մից ուրիշ պատգամաւորական ժողովներին և զանա-
զան եկեղեցական գործառնութիւններին մասնակցելու
համար:

ԺԱ. Գերեզմանատունը մաքուր և վայելուչ պահ-
պանելը:

ԺԲ. Թեմական կարիքների համար հարկաւոր ծախ-
քերին մասնակցելը:

8. Ծխական ժողով հրաւիրում է եկեղեցու աւագե-
րէցը՝ հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ և
կամ առաջարկութեամբ՝

Ա. Թեմական տեսչի

Բ. Եկեղեցու միաբանութեան

Գ. Եկեղեցու հոգաբարձութեան

Դ. Երեսփոխի

Ե. Վերաստուգիչ յանձնաժողովի

9. Նոյն համայնքի առնուազն 12 իրաւասու ծխա-
կաններ:

Ծանօթ. Աւագերէց կամ նրան փոխարինող քահանայ
չեղած դէպքում՝ ժողով հրաւիրում է երեսփոխը:

9. Ծխական ժողովը գումարւում է եկեղեցում.
կարելի է նաև այլ յարմար շէնքի մէջ: Եթէ ժողովը
եկեղեցումն է, սեղանի վարագոյրը պէտք է քաշուած
լինի:

10. Պարբերական ծխական ժողովները գումար-
ւում են տարեկան երկու անգամ, մարտին՝ նախորդ
տարուայ հաշիւները քննելու և նոյեմբերին՝ յաջորդ
տարուայ նախահաշիւը կազմելու:

Ծանօթ. Դպրոցական նախահաշիւն ու հաշիւը քննե-
լու մասին տեսնել Հայոց եկ.-ծխ. դպրոցների
ժամ. ներքին կանոնադրութիւնը:

11. Քաղաքներում և աւաններում ժողովի հրա-
ւէրը լինում է հրաւիրաթղթով, գրաւոր և բերանացի
ծանուցումով, իսկ որտեղ կան լրագիր՝ նաև լրագրա-
կան յայտարարութիւններով ժողովից առնուազն մի
շաբաթ առաջ:

Ծանօթ. Ա. գրաւոր ծանուցումը փակցնում է եկե-
ղեցու պատի վրայ առնուազն մի շաբաթ առաջ՝
յատուկ տեղում, եկեղեցու դրան մօտ. իսկ բա-
նաւոր ծանուցումը՝ եկեղեցում, առնուազն երեք
անգամ: Հրաւիրաթղթում և լրագրական յայտա-

ըարութիւնները մէջ յիշատակուած պէտք է լինին ժողովի գումարման տեղը, ժամանակը և հարցերի օրակարգը:

Բ. Գիւղերում ժողովները գումարում են ըստ տեղական յարմարութեան:

12. Ժողով եղած բոլոր իրաւասու ծխականների անուն—ազգանունները գրւում են մի յատուկ թերթի վրայ:

13. Ժողովի հրաւիրողը բարձրաձայն համեմատում է 12-րդ յօդուածում յիշուած թերթի արձանագրուած անունները ծխական իրաւասուների տարեցուցակի հետ և ստուգում ներկայ գտնուող ծխականների ժողովին մասնակցելու իրաւունքը. (այս վերստուգուած ցուցակը կցւում է ժողովի արձանագրութեան):

14. Ծխական ժողովը կանոնաւոր է համարւում առաջին իսկ անգամ, որքան եւ լինի իրաւասուների թիւը, բացի հոգևոր պաշտօնեաների ընտրութիւնից և կալուածներ գնելու ու վաճառելու դէպքերից (յօդ. 66, 67 և 67-ի ծանօթութիւնը):

Ծանօթ. Ժողովը պէտք է փակուած համարուի, եթէ սկզբում ներկայ եղած իրաւասուների կիսից աւելին հեռացել է նիստից:

15. Ժողովը բացւում է նշանակուած ժամանակից առ առաւելն $\frac{1}{2}$ ժամ յետոյ:

16. Ծխական ժողովի նիստերը դռնբաց են, բացի արտակարգ դէպքերից, երբ ժողովի որոշմամբ նիստը կարող է և դռնփակ լինել:

17. Ժողովի հրաւիրողը, իբրև նախագահ՝ ա. բաց է անում ժողովը և առաջարկում է ընտրել ժողովի ատենապետ և քարտուղար, բ. ներկայ է լինում մինչև ժողովի վերջը և հսկում է ժողովի կանոնաւորութեան՝ կանոնադրութեան անթերի կատարման վրայ ու ստորագրում է ժողովի արձանագրութեան ներքոյ ամենից վերջը, գ. յիշեցնում է՝ ատենապետին, եթէ ժողովում որևէ անպատշաճ խօսք կամ անվայել վարմունք է տեղի ունենում ու ատենապետը չի կանխում կարգի հրաւիրելը:

Ծանօթ. Ա. եթէ նախագահն իրաւասու է՝ մասնակցում է ժողովին ձայնի իրաւունքով:

Բ. եթէ ժողովին ներկայ է Առաջնորդը կամ Փոխանորդը՝ նա է նախագահում ժողովին:

Գ. եթէ նախագահի դիտողութիւնները չեն յարգւում, ներկայացնում է թեմական իշխանութեան ժողովի արձանագրութեան հետ:

18. Ատենապետն անցնելով գործի՝ իշխուր ժողովականների կարգում է ժողովի օրակարգը, որի խնդիրների դասաւորութիւնը ժողովի որոշմամբ կարող է ենթարկուել փոփոխութեան:

Ծանօթ. Ծխական ժողովում խորհրդածութեան և ձայնաւորութեան առարկայ լինել կարող են միմիայն օրակարգում նշանակուած հարցերը: Օրակարգի խնդիրների որոշումները տալուց յետոյ՝ ծխական ժողովում կարելի է նոր խնդիրներ և հարցեր արծարծել ու միայն խորհրդակցութեան նիւթ դարձնել, որոնց համար

վերջնական որոշումներ կ'արուին հետեւեալ ծխական ժողովում:

19. Ատենապետը՝ Ա. քննութեան է դնում օրակարգի խնդիրները ընդունուած դասաւորութեամբ:

Բ. Հսկում է ընդհանուր կարգապահութեան և ծխական ժողովի բոլոր գործողութիւնների կանոնաւորութեան:

Գ. Ծխական ժողովին ներկայ եղող կողմնակի ոչ ժողովական անձերին, որեւէ անկարգութեան դէպքում, անմիջապէս հեռացնում է ժողովից:

Դ. Երկու անգամ պաշտօնապէս կարգի հրաւիրելուց յետոյ՝ անկարգապահ ժողովականին զրկում է խօսելու իրաւունքից, իսկ անկարգութեան յամառ շարունակութեան դէպքում, ժողովի որոշման համաձայն՝ նրան հեռացնում է նիստից:

Ե. Ծայրայեղ դէպքերում, երեք անգամ ամբողջ ժողովը պաշտօնապէս կարգի հրաւիրելուց յետոյ, երբ այլևս անհնարին է շարունակել նիստը, ատենապետը նախագահի համաձայնութիւնն առնելուց յետոյ՝ ժողովը փակուած է յայտարարում:

20. Եթէ ատենապետը ղեռ ժողովը չփակուած, որեւէ պատճառով թողնում է ատենապետութիւնը՝ նոր ատենապետ է ընտրւում (17 յօդուածի ա. կէտ):

21. Եթէ որեւէ ժողովական անձնական շահ ունի խորհրդածուելիք և վճռուելիք խնդրում, այդ խնդրի խորհրդածութեան և վճռման ժամանակ, ժողովի որոշումով, կամ ձեռնպահ է մնում քուէարկութիւնից և կամ հեռանում է նիստից:

22. Իւրաքանչիւր ժողովական ունի միայն մի ձայն կամ քուէ: Ժողովին ներկայ չեղող ծխական իրաւասուն իւր ձայնը կամ քուէն իրաւունք չունի ուրիշին յանձնելու:

23. Ծխական ժողովի որոշումով ձայնատուութիւնը կամ քուէարկութիւնը (թէ վճռուելիք հարցերի և թէ ընտրութիւնների) կարող է լինել ձեռք բարձրացնելով, թերթիկներով կամ քուէներով: Զայնտուութիւնը լինում է գաղտնի, եթէ ժողովականներից նոյնիսկ մի հոգի այդ կպահանջի:

24. Ընտրութիւններ կատարելիս գաղտնի քուէարկութեան դէպքում թեկնածուներ որոշելու համար ատենապետը բաժանում է բոլոր ժողովականներին՝ նախապէս ժողով հրաւիրողի կողմից պատրաստի համարադրուած և կնքուած թերթիկներ: Այդ թերթիկները հաւաքում, հաշւում և կարդում է քարտուղարը՝ ատենապետի վերահսկողութեամբ, և նշանակում է իւրաքանչիւր թեկնածուի ստացած ձայների թիւը: Այնուհետեւ թեկնածուները քուէարկում են ստացած ձայների առաւելութեան կարգով:

Ծանօթ. Իւրաքանչիւր ժողովական իւր թերթիկի վրայ կարող է զրել առ առաւելն այնքան թեկնածուների անուններ, որքան պաշտօնեաներ պէտք է ընտրուեն:

25. Թեկնածուների ընտրութիւնից յետոյ ով չէ հրաժարւում՝ քուէարկւում է: Ընտրուած են համարւում այն թեկնածուները, որոնք շահել են ժողովականների կիսից աւելի, ըստ քուէների առաւելութեան:

Ծանօթ. Անձնափոխանորդների ընտրութիւնը կատարուում է առանձին՝ նոյն եղանակով:

26. Քուէարկուել կարող է նաև ժողովից բացա-կայող անձը, եթէ առաջարկողը երաշխաւորում է, որ ընտրուածը չի հրաժարուի:

Ծանօթ. Ինքը թեկնածուն չի կարող մասնակցել իւր քուէարկութեանը:

27. Ընտրութիւնները կանոնաւոր են, երբ ըն-տրուածները ստանում են ներկայ եղող ժողովական-ների կիսից աւելի ձայն կամ քուէ՝ բացի յատկապէս նախատեսուած դէպքերից (յօդ. 66, 67): Ձայների հաւասարութեան դէպքում վիճակն է որոշում:

28. Ծխական ժողովների վճիռները նոյնպէս լի-նում են ձայների մեծամասնութեամբ. հաւասարու-թեան դէպքում խնդիրը վերաքննւում է և կրկին քուէարկուում և կամ ժողովի՝ որոշումով յետաձգւում է:

29. Ծխական ժողովի փակուելուց առաջ քարտու-ղարը կարդում է արձանագրութիւնը, որի մէջ պէտք է գրի առնուած լինեն ժողովի ամբողջ ընթացքն ու որոշումները: Մանրամասնօրէն արձանագրւում են ատենապետի կողմից ձայնից զրկելու և ժողովից հե-ռացնելու դէպքերը: Արձանագրութիւնը կարդալուց յետոյ, ուղղում են սխալները, ապա ստորագրում են՝ ատենապետը, քարտուղարը և ժողովից յանձնարա-րուած առնուակն հինգ հոգի:

30. Ծխական ժողովից դուրս կազմուած որեւէ հա-մախօսական, նոյնիսկ պաշտօնապէս վաւերացուած

ստորագրութիւններով՝ ծխական ժողովի վճռի ոյժ չունի:

31. Ծխական ժողովի վճիռների և ընտրութիւն-ների դէմ բողոք ունեցող ժողովականն իրաւունք ու-նի արձանագրութեան տակ իւր ստորագրութեան վրայ աւելացնելու միայն «բողոք ունիմ» խօսքը և երեք օրուայ ընթացքում տալիս է իւր գրաւոր բողոքը նա-խագահին՝ արձանագրութեանը կցելու: Բողոքողն իրա-ւունք ունի իւր բողոքի պատճէնը վաւերացնել տալ նախագահի ստորագրութեամբ՝ իւր մօտը պահելու համար:

32. Ծխական ժողովի արձանագրութիւնը ժողովից յետոյ՝ երեք օրից ոչ շուտ և առ առաւելն մի շաբաթուայ ընթացքում նախագահը ներկայացնում է մերձաւոր հոգևոր իշխանութեան, վերջինս էլ երեք օրուայ ըն-թացքում պարտաւոր է ներկայացնել թեմական իշ-խանութեան:

33. Ծխական ժողովի բոլոր վճիռներն և ընտրու-թիւնները գործադրւում են թեմական իշխանութեան կողմից հաստատութիւն ստանալուց յետոյ:

34. Թեմական իշխանութիւնն իւր որոշումը թէ՛ հաստատելու և թէ՛ բեկանելու դէպքում, պարտաւոր է յայտնել ծխական համայնքին ի գիտութիւն առ առա-ւելն մի ամսուայ ընթացքում: Մէկ ամիսը հաշւում է ժողովի արձանագրութիւնը թեմական իշխանութեան հասնելու օրից:

35. Եթէ թեմական իշխանութիւնը բեկանում է ծխական ժողովի որոշումը կամ ուշացնում է հաստա-

սուլթիւնը՝ կարելի է բողոքել բարձրագոյն Հոգևոր պատշաճ իշխանութեան:

Գ.

ԺԽԱԿԱՆ ՀՈԳԵԱՐԺՈՒԹԵԱՆ, ԵՐԵՍՓՈՒԽ,
ՎԵՐԱՍՏՈՒԳԻԶ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆ
ՈՒ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ:

36. Եկեղեցու գոյքերն ու հաստատութիւնները կառավարելու և նրա բոլոր գործերը վարելու համար ծխական ժողովն ընտրում է իրաւասու ծխականներէց, երեք տարի ժամանակով, ծխական հոգաբարձուներ և երեսփոխ, որ անգամ է հոգաբարձութեան, հոգաբարձուների հետ հաւասար իրաւունքներով: Հոգաբարձուների թիւը պէտք է լինի քաղաքներում և հարիւր ծխից աւելի գիւղերում չորս, իսկ աւելի փոքր գիւղերում՝ երկու: Սրանց հաստատում է թեմակալ Առաջնորդը, իսկ երեսփոխին վիճակային կոնսիստորիան:

37. Հոգաբարձական կազմի հետ միաժամանակ ծխական ժողովն ընտրում է նաև վերստուգիչ յանձնաժողով: Այս յանձնաժողովի պարտականութիւնն է քննել հոգաբարձութեան տարեկան հաշիւները և գեղուցանել ծխական պարբերական ժողովին (յօդ. 10, 55):

38. Նոր հոգաբարձութիւն ընտրելուց առաջ ծխական ժողովը պէտք է քննէ հին կազմի հաշիւները,

լսելով վերստուգիչ յանձնաժողովի գեղուցումը նրա գործունէութեան մասին, և ապա կատարի ընտրութիւնը: Եթէ հոգաբարձութիւնը ժամանակին չհերկայացնի հաշիւները, կամ եթէ ներկայացրած հաշիւները ծխական ժողովից համարուեն անբաւարար կամ վիճելի, այս դէպքում էլ ձեռնարկւում է նոր կազմի ընտրութեան:

Ծանօթ. Ա. Հաշիւ չներկայացրած կամ անբաւարար հաշիւ ներկայացնող հոգաբարձութեան անգամները վերընտրելի չեն:

Բ. Նոյն ժողովում, հարկ եղած դէպքում, կարելի է որոշել հոգաբարձութեան հին կազմը դատի ենթարկել:

39. Ծխական ժողովն ընտրում է հոգաբարձութեան համար երկու անձնափոխանորդ:

40. Ծխական հոգաբարձութեան եկեղեցուն վերաբերեալ խնդիրների նիստերին մասնակցում է եկեղեցու աւագերէցը ձայնի իրաւունքով, իսկ դպրոցներին վերաբերեալ խնդիրների նիստերին մասնակցում է դպրոցի տեսուչը կամ աւագ ուսուցիչը՝ նոյնպէս ձայնի իրաւունքով:

41. Ինչպէս հոգևոր իշխանութեան ներկայացուցիչներին, նոյնպէս և վերստուգիչ Յանձնաժողովին՝ ամեն անգամ, երբ սրանք պահանջեն, ծխական հոգաբարձուները և երեսփոխները պարտաւոր են անյապաղ ներկայացնել իրենց բոլոր մատեանները և հաշիւներն ի գննութիւն:

42. Հին հոգաբարձութիւնը շարունակում է պաշ-

տօնավարութիւնը մինչև նորը ստանձնէ իւր պաշտօնը. նա պարտաւոր է յանձնել նորին Հոգեւոր Իշխանութեան ներկայացուցչի և վերստուգիչ յանձնաժողովի անդամների ներկայութեամբ և ստուգութեամբ եկեղեցու և իւր հաստատութիւնների բոլոր զոյքը՝ յանձնողական և ստացողական ցուցակներով:

43. Անձնափոխանորդը հրաւիրուում է մասնակցելու հոգաբարձական ժողովներին, ըստ քուէների առաւելութեան հոգաբարձութեան անդամի աւելի քան մի ամիս բացակայելու դէպքում:

44. Հոգաբարձուի հրաժարուելու դէպքում, եթէ պաշտօնավարութեան ժամանակի կիսից աւելին անցել է՝ առաւելագոյն քուէ ստացած անձնափոխանորդը փոխարինում է հրաժարուած հոգաբարձուին, իսկ եթէ պաշտօնավարութեան ժամանակամիջոցի կիսից աւելի է մնում, այդ դէպքում մնացած ժամանակամիջոցի համար ընտրուում է հոգաբարձութեան նոր անդամ:

45. Ծխական հոգաբարձութեան անդամներն իրենց մէկին ընտրում են նախագահ, և խնդիրներն որոշում ձայների մեծամասնութեամբ: Գանձապահի պաշտօնը կատարում է երեսփոխը: Նիստի տեղի, ժամանակի և օրակարգի մասին հոգաբարձութիւնը վաղօրօք յայտնում է աւագերէցին կամ աւագ-ուսուցչին (յօդ. 40):

46. Հոգաբարձութեան նախագահը, նախապէս կազմելով օրակարգը, հրաւիրում է հոգաբարձութեան անդամներին ժողովի, ղեկավարում է ժողովը, ստո-

րագրում է հոգաբարձութեան անունից ուղղուած պաշտօնական գրութիւնները և առհասարակ հսկում է գործավարութեան կանոնաւորութեան վերայ:

47. Հոգաբարձութիւնն ունենում է ըստ տեղական պայմանների պարբերական ժողովներ առնուազն ամիսը մի անգամ:

48. Հոգաբարձութիւնն ունի իւր պաշտօնական կնիքը սահմանուած ձևով՝ եկեղեցու անունով:

49. Երեսփոխը, բացակայութեան դէպքում, իւր պաշտօնը ժամանակաւորապէս յանձնում է հոգաբարձութեան անդամներից մէկին, իւր պատասխանատուութեամբ. իսկ նրա իսպառ հրաժարուելու դէպքում հոգաբարձութիւնն անմիջապէս ղեկուցանում է ի տնօրէնութիւն թեմական իշխանութեան և իւր անդամներից մէկին է յանձնում նորա պաշտօնը՝ մինչև նոր երեսփոխի ընտրութիւնը:

50. Ծխական հոգաբարձութիւնն եկեղեցու համար կազմում է մի նախահաշիւ, որի մէջ պէտք է մտնեն թէ՛ եկեղեցու, թէ՛ դպրոցի և թէ՛ եկեղեցւոյ այլ հաստատութիւնների բոլոր մուտքերն ու ելքերը: Ամեն մի հաստատութիւն կարող է ունենալ ելից և մտից առանձին մատեան, իսկ ընդհանուր մուտքն ու ելքը պէտք է արձանագրուի եկեղեցուն տրուած մայր մատեանի մէջ (յօդ. 60):

51. Իւրաքանչիւր եկեղեցի իւր եկամտի 20%-ը պէտք է ամեն տարի ուղարկի Թեմական Իշխանութեան միջոցով Ս. Էջմիածնի Սինօդին, որից 10%-ը Դպրոցական ֆոնդին յատկացնելու, իսկ 10%-ն էլ եկեղե-



ցական Ֆոնդի օգտին: Եկեղեցական Ֆոնդի տոկոսները գործադրուելու են նիւթապէս չքաւոր գիւղական եկեղեցիների բարեգարգութեան և չքաւոր քահանաների ապահովութեան համար:

52. Ծխական հոգաբարձութիւնը պարտաւոր է իւրաքանչիւր տարի իւր տարեկան ելումուտքի նախահաշիւը կազմել և ծխական ժողովի վաւերացումից յետոյ ուղարկել Թեմական Իշխանութեան ի հաստատութիւն, իսկ մինչև նորի հաստատութիւնը՝ պէտք է առաջնորդուի նախորդ տարուայ նախահաշիւով:

53. Ծխական հոգաբարձութիւնը պարտաւոր է նախահաշուի բոլոր կէտերը ճշտութեամբ գործադրել: Որևէ յօդուածից աւելի ծախք պահանջուած դէպքում կարող է աւելի ծախսել այդ յօդուածով որոշուած գումարի 10%⁰-ը նոյն յօդուածով որոշուած նպատակին: Իսկ աւելի պահանջուած դէպքում պէտք է դիմի ծխական ժողովին՝ նոր վարկ բանալու:

54. Դրամական բոլոր ծախսերի համար պահանջւում է ստացողի ստորագրութիւնը ելումուտից հաշուեմատեանում, կամ առանձին ապացուցաթուղթ՝ ստացողի ստորագրութեամբ:

55. Ծխական հոգաբարձութիւնը մինչև փետրուար ամիսը պարտաւոր է նախորդ տարուայ հաշիւը ներկայացնել վերստուգիչ յանձնաժողովին, որի քննութեան արդիւնքը իւր բացատրութեան հետ ներկայացնում է մարտին գումարուած ծխական ժողովին. իսկ վերջինն իւր եզրակայութեան հետ ներկայացնում է թեմական իշխանութեան (յօդ. 37):

56. Ծխական հոգաբարձութիւնը պարտաւոր է իւրաքանչիւր ամիս ստուգել իւր և իւր իրաւասութեան ներքոյ գտնուած հաստատութեանց ել և մտից դրամական մատեանները, կազմելով արձանագրութիւն և վաւերացնելով իւր ստորագրութեամբ մատեանի մէջ:

57. Եթէ եկեղեցական եկամուտները բաւական չլինեն ծխական բոլոր կարիքներին բաւարարութիւն տալու, հոգաբարձութիւնը կազմում է ծխականներից միանուագ կամ պարբերաբար դրամով կամ բնական բերքերով որոշ տուրք ժողովելու նախագիծ: Այդ նախագիծն առաջարկւում է ծխական ժողովի քննութեան, և օրինաւոր կերպով ընդունելուց և որոշում դառնալուց յետոյ պարտաւորեցուցիչ է համաձայնութիւն տուողների համար:

58. Եկեղեցու և իւր հաստատութիւնների դրամագլուխները տոկոսով աճեցնելու համար յանձնում են պետական կամ հասարակական բանկային հաստատութիւններին եկեղեցու անունով: Կարելի է նաև շահեցնել մասնաւոր կերպով, եթէ եկեղեցու համար յարմար և ձեռնտու դատուի ծխական ժողովի կողմից և յանձուելիք գումարը հաստատուն գրաւականով ապահովուի Թեմական Իշխանութեան թոյլտուութեամբ ու պատասխանատուութեամբ:

59. Դրամաւաներում ունեցած ծխական եկեղեցու գումարների անգորրագրերը, բանկային սոմսերը, մուրհակները և առհասարակ արժեթղթերը, եթէ դրանց բոլորի գումարը միասին հինգ հարիւր ուրբ-

լուց աւելի չէ, կարող են պահուել երեսփոխի մօտ ծխական հոգաբարձութեան ղիտութեամբ, իսկ եթէ հինգհարիւր ուրբուց աւելի է, պէտք է տրուեն ի պահ բանկային հաստատութիւններին եկեղեցու անունով:

60. Ծխական հոգաբարձութիւնը ստանում է թեմական Իշխանութիւնից երեք ժապաւինեալ մատեան՝ մէկում արձանագրելու եկեղեցու անշարժ գոյքը, անօթեղէններն ու այլ իրերը, նաև զբաղմունքները և այն բոլոր եկամուտները, որոնք հասարակական վրձնով, մասնաւոր անձանց խոստովանելով կամ կտակներով հասնելու են եկեղեցուն կամ եկեղեցական հաստատութիւններին, երկրորդում՝ ծխական եկեղեցու և իւր հաստատութիւնների տարեկան բոլոր մուտքն ու ելքը, իսկ երրորդում եկեղեցու բոլոր ծխականների ցուցակը:

61. Ամեն տարի հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին ծխական եկեղեցու քահանաները ծխական հոգաբարձութեան հետ կազմում են մի ցուցակագրող յանձնաժողով, որ վերստուգելով և լրացնելով ծխականների մայր մատեանը, կազմում է իրաւասու ծխականների լրիւ ցուցակ:

62. Իւրաքանչիւր ծխական իրաւունք ունի բողոքելու ցուցակագրող յանձնաժողովի կազմած տարեցուցակի սխալների դէմ յանձնաժողովին: Եթէ ցուցակագրող յանձնաժողովը չյարգէ բողոքը, բողոքատուն իրաւունք ունի դիմելու ծխական ժողովին. վերջինս այդպիսի խնդիրներն որոշելուց յետոյ անցնում է օրակարգի հարցերին:

Դ.

ՀՈԳԵԽՈՐ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.

(Դպիր, սարկաւագ, ֆահանայ):

63. Իւրաքանչիւր համայնք իրաւունք ունի առանձին քահանայ ունենալու: Համայնքն ապահովում է քահանայի տնտեսական վիճակը պարտաւորական համախօսականով, որի մէջ որոշուած են լինում նրա ապրուստի միջոցներն ըստ տեղական պայմանների.

Ա. Տարեկան ուճիկ

Բ. Տուրքեր ծխակատարութիւնների համար:

Գ. Հողաբաժին

Դ. Կալամաս (կալապտուղ)

64. Իւրաքանչիւր քահանայ ունենում է մինչև 250 ծուխ—մատաղաբաժին: Երկրորդ քահանայի խնդիր կարող է յարուցանել համայնքն այն դէպքում, երբ ծխականների տների թիւը կհասնի 350-ի: Ըստ այսմ՝ երրորդ քահանայի խնդիր այն դէպքում՝ երբ ծխերի ընդհանուր թիւը կհասնի 600-ի և այսպէս յաջորդաբար:

65. Քահանայի ծերութեան կամ որևէ անբուժելի հիւանդութեան դէպքում, որ արգելք է լինում նրան քահանայագործելու, համայնքը յարուցանում է նոր քահանայ ունենալու խնդիր, ապահովելով ծեր, հիւանդ քահանայի նիւթական վիճակը՝ մասամբ իւր և մա-

տամբ նորընծայի հաշուին: Քահանայի մահուան դէպքում նոյն տպահովութիւնը շարունակուում է նորատարու և անչափահաս որբերի համար առնուազն մի տարի:

66. Հոգևոր սրբազնագործ պաշտօնեաներ (քահանայ և սարկաւազ) ընտրելու համար գումարուած ծխական ժողովը կանոնաւոր է համարուում, երբ մինչև 300 իրաւասու ծխական ունեցող ծխի կիսից աւելին ներկայ է: Աւելի մեծ համայնքներում յիշեալ 150 թուի վրայ պէտք է աւելանայ իւրաքանչիւր 100 իրաւասուից 10:

67. Հոգևոր պաշտօնեայ ընտրուած կարող է համարուել միայն նա, ով ստացել է յօգուտ իւր՝ ժողովում (յօդ. 66) ներկայ եղող իրաւասուների ձայների $2\frac{1}{3}$ մասը:

Ծանօթ. Նոյն թիւը (յօդ. 66, 67) պահանջուում է կալուածներ գնելու և վաճառելու համար:

68. Իւրաքանչիւր եկեղեցի պէտք է ունենայ քահանաների թուով նաև տիրացուներ, որոնց նիւթաւանը հոգում է համայնքը կամաւոր տուրքերով կամ ոռճկով, ինքը քահանան պարտաւոր է իւր տիրացուին մասնակից անել բոլոր օրինակատարութիւններին: Տիրացուին հրաւիրում է և արձակում երեսփոխը քահանայի համաձայնութեամբ:

69. Հոգևոր պաշտօնի մէջ մտնելու պայմաններն են.

Ա. Քահանայացուն պէտք է լինի առնուազն 25 և առ առաւելն 50 տարեկան:

Բ. Չեն կարող ընտրելի լինել՝

ա, Որոնք կանոնական իրաւունքներով նախատեսուած պահանջներին չեն համապատասխանում:

բ, Որոնք պետական օրէնքների զօրութեամբ և դատաստանով քրէական յանցանքների համար բոլորովին կամ մասամբ զրկուած են իրաւունքներից:

գ, Որոնք դատի տակ են այնպիսի յանցանքների համար, որոնց հետեանքն է լինում բոլորովին կամ մասամբ իրաւունքից զրկուելը:

դ, Որոնց վրայ հասարակութեան կողմից վկայեալ խոշոր բարոյական արատ կայ:

70. Նախագահը ժողովի արձանագրութիւնը ներկայացնում է մերձաւոր հոգ. իշխանութեան ընտրեալի պարտաւորական ստորագրութեամբ՝ ընտրուած տեղում ցմահ քահանայագործելու: Թեմական Իշխանութիւնն ընտրուածի ծննդեան, գինուորագրութեան, ուսման և բժշկական վկայականները ստանալուց յետոյ՝ երկու շաբաթուայ մէջ ընթացք է տալիս քահանայացուի գործին:

71. Քահանայացուները պէտք է ունենան Մ. Աթոռի Ճեմարանի կամ Թեմական Դպրանոցի աւարտման վկայական. իսկ այն գիւղերի համար, որոնք հնարաւորութիւն չունեն դպրանոցաւարտ քահանաներ պահելու, ընծայացուն պէտք է քննութեան ենթարկուի կանոնադրութեանս կցուած յաւանձին ծրագրով:

72. Այս կանոնադրութեան որեւէ կէտը փոխելու համար՝ պատճառաբանուած խնդրագրով պէտք է դիմել Վեհափառ Հայրապետին:

73. Այս ծխական կանոնադրութեան պաշտօնական հրատարակմամբ և գործադրութեամբ դադարում են Հոգևոր քարծրագոյն, թեմական և տեղական իշխանութիւնների կողմից տրուած բոլոր ընդհանուր և մասնական կանոններն ու հրահանգները, որոնք վերաբերում են այս կանոնադրութեան խնդիրներին:



Ծ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՅԱՆԱՅԱՑՈՒՆԵՐԻ ՀՐԱՅԱՆԳՈՒԹԵԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Ա. Հին ուխտի Սրբազան պատմութիւն: Առաջին մարդիկ և նահապետներ. Մովսէս. Իսրայելացւոց ազատութիւնը՝ Նգիպտոսից և անապատում ընդունած օրէնքը: Յեսու Նաւեայ և Աւետեաց երկրի նուաձումը. Դեբովրա, Դեղէոն, Սամսոն: Թագաւորներ. Իսրայէլի և Յուդայի թագաւորութիւն. Նդիա և Նդիսէ մարգարէ. Ամովս, Ովսէ, Եսայի և Ներմիա մարգարէներ. Բաբելոնի գերութիւնը. Նգեկիէլ. գերեզարդը: Մակաբայեցիք:

Բ. Նոր-ուխտի Սրբազան պատմութիւն: Յովհաննէս Մկրտիչ: Փրկչի ծնունդը, մանկութիւնը: Մկրտութիւնը, փորձութիւնը: Աշակերտները. լերան քարոզը, հրաշքները, առակները. փարիսեցւոց և սադուկեցւոց հակառակութիւնը: Յաղթական մուտքը Երուսաղէմ: Վերջին քարոզութիւնները. վերջին ընթրիքը, սիրոյ քարոզը: Մատնութիւնը, չարչարանքը, խաչելութիւնը, թաղումը, մահը, Յարութիւնը, Համբարձումը:

Գ. Առաքեալների գործունէութիւնը եւ կաթուղիկէ եկեղեցւոյ ճիմնարկութիւնը: Հոգեգալուստ. ա-

ռաջին առաքելական քարոզութիւնները և առաջին համայնքը. Ստեփաննոս Նախավկայ: Պօղոս առաքեալի դարձը, ճանապարհորդութիւններն ու քարոզութիւնը: Քրիստոնէութեան տարածումը Ասորիքում, Փոքր Ասիայում, Յունաստանում, Հռոմում, Եգիպտոսում և Կարթագէնում. Հռոմէական կայսրների հանած հալածանքը: Եկեղեցական վարչութիւն, պաշտամունք և գիտութիւն, դաւանանք և դաւանաբանական վէճեր:

Դ. Հայոց եկեղեցւոյ պատմութիւն: Աւանդութիւններ Հայոց առաջին Լուսաւորիչների մասին: Ս. Գրիգոր Լուսաւորիչ. Հռիփսիմեանք, Տրդատի և հայ ժողովրդի դարձը: Հայոց եկեղեցւոյ կազմակերպութիւնը. Նիկիոյ ժողովը: Լուսաւորիչի տոհմի հայրապետները. Մեծն Ներսէս. Կրօնաւորութիւն: Ս. Սահակ Պարթև և ս. Մեսրոպ. գրերի գիւտի արդիւնքը. Թարգմանիչներ: Եփեսոսի ժողովը և Հայոց եկեղեցւոյ դաւանութիւնը: Շահապիվանի ժողովը: Վարդանանք և Վահանանք: Հայրապետական աթոռը Դուինում. Գիւտ և Յովհան Մանգակունի. Դուինի Ա. և Բ. ժողովները: Վրաց բաժանումը. Կոմիտաս Կաթողիկոս. Եզր. Ներսէս Գ. Շինող. Յովհան Օձնեցի և Մանազկերտի ժողովը: Բագրատունեաց շրջանի հայրապետները. Հայոց վանքերը. Գրիգոր Նարեկացի: Պահլաւունի հայրապետներ և Հայրապետական աթոռը Հռոմկլայում. Ներսէս Շնորհալի. Աղթամարի կաթողիկոսութիւն: Միութեան խնդիրներ. Զորագետցիք. Հայրապետական աթոռը Սիսում և լատինական ազդեցութիւններ. Գրիգոր Տաթևացի: Հայրապետական աթոռի փոխադրութիւնն ի ս. Էջմիածին: Սոյ կաթողիկոսութիւն: Երուսա-

ղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքութիւններ: Ժէ. դարու վերածնութիւնը. Մոզսէս Տաթևացի և Փիլիպպոս. Սիմէօն Երևանցի: Մայր աթոռը Ռուսաց իշխանութեան ներքոյ. պոլոժենիա. Ներսէս Ե. և Գէորգ Կ.:

Ե. Ուսումն ս. գրոց: Հին և նոր կտակարանների վազմութիւնը. կարգաւ և թարգմանել աւետարանները. Եսայի մարգարէութեան և Առակաց Գրքի կարևորագոյն հատուածները. Պօղոս առաքեալի Առ Հռովմայեցիս, Առ Կորնթացիս, Առ Գաղատացիս և Առ Եփեսացիս թղթերը. Յակովբայ թուղթը: Քրիստոնէական հաւատոյ և բարոյականութեան հիմնական սկզբունքները:

Զ. Դաւանագիտութիւն և գործնական գիտելիքներ Հաւատոյ հանգանակը՝ բերանացի և բացատրութեամբ: Մարգեղութեան խորհրդի նկատմամբ մեր և Յունաց կամ Հռովմէական եկեղեցիների մէջ եղած դաւանական կէտերի տարբերութիւնը: Ս. Հոգւոյ իշման խնդիրը: Բողոքականութիւն: Մեր եկեղեցուն յատուկ և ուրիշ եկեղեցիներից տարբերող ծէսեր, տօներ և կարգեր: Եկեղեցւոյ հիմնական խորհուրդները. նոցա նշանակութիւնը և կատարման եղանակը: Եկեղեցւոյ շինութիւնը, անօթները և հանդերձները. նոցա նուիրագործումն և դործածութիւնը: Եկեղեցական տարին: Տէրունական, խաչի և եկեղեցւոյ տօներ. Սրբոց տօներ. կիւրակէ պահուող և աւագ տօները, շաբաթ օրերը տօնուող Սուրբերը: Ապաշխարութեան օրեր. Մեծ պահք և շաբաթապահքեր: Ժամասացութիւն. Առաւօտեան, Արեւադարի և Ճաշու ժամեր. Պատարագ. Երեկոյեան և Խաղաղական ժամեր. Նախատօնակ. Հսկում. Մաղթանք, Հոգեհանգստեան

կարգ:

Հայոց եկեղեցւոյ վարչական կազմակերպութիւնը Ռուսաստանում, Տաճկաստանում և արտասահմանեան այլ երկրներում: Թեմերի բաժանումը Ռուսաստանում: Առաջնորդ և Կոնսիստորիա, Փոխանորդ և Հոգեւոր կառավարութիւն. գործակալ. աւագերէց. ծխական համայնք և ծխական մարմիններ, ծխական հոգեւոր պաշտօնէութիւն: Թեմերի բաժանումը Տաճկաստանում և այլ երկրներում. Պատրիարք և Ազգային ժողով:

Եկեղեցական կարգապահութիւն: Պսակի տարրական կանոններ: Ծխական կանոնադրութիւն:

Է. Եկեղեցական պատժաման վարժութիւններ. ա. Ձայնագրեալ շարականների գործածութիւնը:

Ութն ձայն եղանակների վրայ կազմուած բոլոր շարականները, ստեղի և զարդուղի եղանակներն իրենց բոլոր սկսուածքներով իմանալ երգել ձայնանիշներով և բառերով: Բ. Քաղուածք անուանեալ ձայնագրեալ բոլոր շարականները նոյնպէս իմանալ երգել ձայնանիշներով և բառերով: Գ. Ձայնագրեալ ժամագրքի գործածութիւնը նրա մէջ գետեղուած բոլոր երգերը իմանալ կատարել ձայնանիշներով և բառերով: Դ. Ձայնագրեալ պատարագի արարողութեան մէջ գետեղուած բոլոր մեղեդիները, և առհասարակ պատարագի վերաբերեալ բոլոր երգերն իմանալ ձայնանիշներով և բառերով երգել:

Մաշտոցի, Տօնացոյցի և ժամագրքի գործածութիւնը:

Մատուցումն ա. պատարագի և հանդէսների ու

կարգերի պատշաճաւոր կատարումն:

Հովուական պարտականութիւններ:

Յարաբերութիւն եկեղեցական իշխանութեան և ծխական մարմինների հետ:

Պաշտօնական թղթավարութիւն:

Կրօնի փորձնական դասեր և փորձնական քարոզ:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. ԱՇԽԱՏԱՆԱԲԱՐ

Ճշտութեամբ արտայայտել և պատմել գրական բոլոր տեսակների գրուածքների իմաստն ու բովանդակութիւնը: Անսխալ գրել և շարադրել կարողանալ: Ծանօթութիւն արեւելեան և արեւմտեան աշխարհաբարի տարբերութեան և բարբառների մասին:

Քերականութիւն՝ ա) ստուգաբանութիւն—բայեր և նոցա խոնարհումը, գոյական անուններ և դերանուններ և նոցա հոլովները: Ածականներ, յօդեր, նախադրութիւններ և շաղկապներ:

բ. Շարահիւսութիւն—Համաձայնութեան մասերը. ասացուածքի տեսակները. ենթակայ, սեռի և բնութեան խնդիրներ: Խնդրառութիւններ. յատկացուցիչ յատկացեալ, բացայայտիչ բացայայտեալ. որոշիչ, որոշեալ: Պարագայական բառեր և յօդեր: Համադրութիւն. որոշիչ, լրացուցիչ և պարագայական երկրորդական նախադասութիւններ: Համադրութեան տեսակները. տրոհութիւն: Համառօտ, բնորոշ, դրական, բացասական, հաստատական, հարցական և այլն նախադասութիւններ: Ծանօթիւն ոճի տեսակների մասին:

2. ԳՐԱԲԱՐ

Հարազատութեամբ թարգմանել կարողանալ ու Գիրքը և եկեղեցական հայրերի գրուածքներէց: Քե-
րականութիւնից՝ ա. մասը—ստուգաբանութիւն:

3. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ա.) Ծանօթութիւն գրականութեան տեսութեան
մասին: Ներածութիւն Հայոց գրականութեան:

բ.) Եկեղեցական մատենագրութիւն—տառերի
գիւտը, ս. Սահակ և ս. Մեսրոպ, թարգմանիչներ.
Եկեղեցական մատենագրութեան տեսակները: Թարգ-
մանութիւններ և բնագրեր: Հայաստանեայց եկեղեցու
մատենագիր Հայրերը—ս. Գրիգոր Լուսաւորիչ և
նրան վերագրուող գրական գործերը, ս. Սահակ, Մամ-
բրէ Վերծանող, Դաւիթ Անյաղթ, Գիւտ կաթողիկոս,
Յովհան Մանգակունի և այլք:

գ.) Պատմագրութիւն—Կորիւն, Ագաթանգեղոս,
Փաւստոս, Ղազար Փարպեցի Եղիշէ, Մովսէս Խորե-
նացի, Սեբէոս, Դեւոնդ Պատմիչ:

դ.) Վերածնութեան շրջան: Աշխարհաբար գրա-
կանութեան սկզբնաւորութիւնը՝ Ալամգարեան, Թաղ-
եաթեան, Աբովեան, Նալբանդեան, Պատկանեան, Շա-
հազիզ, Պռօշեան, Աղայեան, Ալիշան: Նոր հայ գրողներ:

ՌՈՒՍՍԵ ԼԵԶՈՒ

Կարգալ, թարգմանել, գրել պարզ խօսակցու-
թիւն, և տարրական քերականութիւն գիտենալ:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Հին Հայաստանի սահմանները. վարչական բա-
ժանութիւնները և նախարարական կալուածները: Գլխա-
ւոր լեռներ, Զրաբաշխներ, հարթավայրեր, կլիմա,
հանքեր, բոյսեր և կենդանիներ:

Հայաստանի բնակիչները. Հայոց լեզուն և կրօնը:
Հաղորդակցութեանց ճանապարհները և գլխաւոր քա-
ղաքները:

Ներկայ Հայաստանի բաժանութիւնները

ա.) Ռուսահայք:

բ.) Տաճկահայաստան—Հայկական վեց նահանգ-
ները և Հայկական Կիլիկիա:

գ.) Պարսկահայք:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նախնական Հայաստանը և իւր պատմութիւնը:
Հայերի ծագումը: Հայկական հարստութեան կազմա-
կերպումը, Տիգրան մեծ:

Արշակունեաց հարստութեան հաստատումը: Քրիս-
տոնէութեան մուտքը Հայաստան: Վերջին Արշա-
կունիք: Պարսկայունական յարաբերութիւններ: Պարս-
կական տիրապետութեան վերջին շրջանը: Յունական
բաժնի հայերը:

Արաբացոց հանդէս գալը և նոցա տիրապետու-
թիւնը Հայաստանում:

Բագրատունեաց հարստութեան հաստատումը.

Աշոտ գ. Անի մայրաքաղաքը: Երկրորդական թագաւորութիւններ, Բագրատունեաց անկումը: Հայաստանը սելջուկեանց շրջանում: Կիլիկեան Հայկական թագաւորութեան հաստատումը, Լևոն բ. Հեթումեան և Լուսինեան թագաւորներ: Կիլիկիոյ անկումը:

Պարսից և Օսմանցոց պատերազմները Հայաստանի տիրապետութեան համար: Պարսկահայաստան և Տաճկահայաստան: Հայկական զաղութները: Հայոց ներքին կեանքի պայմանները վերոյիշեալ պատմաշրջաններում:

Ռուսահայք, պոլոժենիա: Տաճկահայք. Ազգային Սահմանադրութիւն և Հայաստանի բարենորոգումները:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆիզիքական և բնական աշխարհագրութիւն: Քաղաքական աշխարհագրութիւն՝ Ռուսաստանի, Կովկասի, բաւարար չափով Եւրոպայի և Առաջաւոր Ասիայի, ընդհանուր կերպով մնացեալ մասերի:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. Համառօտ պատմութիւն Ասորեստանցւոց, Բաբելացւոց և Եգիպտացւոց, Մարաց և Պարսից, Յունաց և Հռոմէացւոց:

Եւրոպական մեծ պետութիւնների կազմակերպումը ժ. զարում և արդի դրութիւնը:

Բ. Համառօտ պատմութիւն Ռուսաց Մեծն Պետրոսի օրից ի վեր: Աղէքսանդր Բ.-ի թագաւորութեան բարենորոգումները և ճորտերի ազատութիւնը: Աղէքսանդր Գ. Նիկոլայ Բ. Պետական Դումա:

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Չորս գործողութիւններ անուանական և վերացական թուերով.

Թուերի բաժանականութիւնը.

Անմացորդ բաժանման նշանացոյցերը 2-ի, 4-ի, 8-ի, 3 և 9 ի վրայ.

Ամենամեծ ընդհանուր բաժանարար և ամենափոքր բազմապատիկ թիւ.

Կոտորակ, հասարակ և տասնորդական կոտորակներ. Չորս գործողութիւն հասարակ և տասնորդական կոտորակներով.

Պարբերական կոտորակներ.

Յարաբերութիւններ և համեմատութիւններ.

Պարզ և բարդ երից կանոններ.

Տոկոսների և մուրհակների զեղջման կանոն.

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Բճիճ. միաբճիճ և բազմաբճիճ կենդանիներ.

Նախակենդանիներ. ամեօբա.

Տըկընդերբ. հիդրա

Որդեր. սօլիտէր (երկգորդ)

Փշամորթներ, ծովասող.

Հատուածոտանիներ, խեցգետին.

Փափկամարմիններ, խիռնջ.

Ողնաշարաւորներ 1) ձկներ, 2) երկակենցաղներ, 3) սողուններ, 4) թռչուններ, 5) կաթնասուններ, Իւրաքանչիւր դասակարգից մէկ ներկայացուցիչ:

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Բուսական թագաւորութեան երկու մասի բաժան-

ւելլը, սերմնաւորներ և բեղմնեկաւորներ.
 Բոյսերի ներքին կազմութիւնը. բճիճ.
 Սերմ. միաշաքիլ և երկշաքիլ բոյսեր.
 Արմատ. նրա պաշտօնը.
 Տերև, նրա դերը.
 Յօղուն, նրա պաշտօնը և կազմութիւնը.
 Ծաղիկ, նրա մասերը.
 Սունկեր.

ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Բիւրեղներ.
 Հանքեր. տարրեր, մետաղներ և մետաղակերպներ.
 Օքսիդներ. տեսակները.
 Ծծմբուկներ. երկաթածծումբ.
 Բնածխատ. ծծմբատներ, բորակատներ. իւրա-
 քանչիւրից մի տեսակ.

ԲՆԱԽՍՈՒԹԻՒՆ

Մարդու կմախքը.
 Շնչառութեան գործարան.
 Մարսողութեան գործարան.
 Նեարդային համակարգութիւն.
 Հինգ զգայարանքներ.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Համառօտ տեղեկութիւն բակտէրիաների մասին.
 Օդ. բաղադրիչ մասերը. թթուածին, բորակածին,
 ածխաթթու.
 Օդի ֆիզիկական յատկութիւնները. կլիմա, խո-
 նաւութիւն.

Բնակարան, օդամաքրութիւն.
 Վառելիք, լուսաւորութիւն, նրանց առողջապա-
 հական նշանակութիւնը.
 Հող. ջուր.
 Մնունդ. գլխաւոր տեսակներ.
 Վարակիչ հիւանդութիւններ և միջոցներ սրանց
 դէմ.

ՖԻԶԻԲԱ

Մեքենայագիտութիւն. Մարմինների յատկու-
 թիւնները.
 Լծակներ,
 Ջրաբաշխութիւն. Պասկալի և Արքիմէդի օրէքները.
 Գազեր, գազերի յատկութիւնները.
 Ջերմութիւն. ջերմաչափ.
 Մարմինների լայնանալը.
 Ջերմութեան տարածումը. լաւ և վատ հաղորդիչ-
 ներ.
 Շոգիներ, շոգեկառք.
 Ջայն. ձայնի ալիքները.
 Լոյս. բեկեղկում. հայելիներ, ապակիներ.
 Մագնիսականութիւն.
 Ելեքտրականութիւն. Գալվանականութիւն, ելեք-
 տրական մեքենաներ կային:

ՄԱՏԵԱՆ

Ե Լ Ի Ց Ե Ի Մ Տ Ի Ց

.....Եկեղեցու.....բաղաքի (կամ գիւղի)

Վառն 191.....թուին

№ ըստ կարգի	Ամիս և ամսաթ.	Մ Ո Ւ Տ Ք	Ռ.	Կ.	Ռ.	Կ.

№ ըստ կարգի	Ամիս և ամսաթ.	Ե Լ Ք	Ռ.	Կ.	Ռ.	Կ.

Բ. ձև

Մ Ա Տ Ե Ա Ն

.....եկեղեցու.....քաղաքի (կամ գիւղի)

ԾԽԱԿԱՆՆԵՐԻ.

Կազմած 191.....թուին

Գրանցման համար	Տարի	Հայտարարության թիվ	Տեղեկություններ հայտարարության մասին	Կատարման արդյունք
1	2018	1	Հայաստանի Հանրապետության Ստատիստիկական կոմիտեի հրապարակման համար 01-02-03/18 հաշվառման և վարկառության կապիտալի մասին տվյալների հավաքագրման համար 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ	Հայաստանի Հանրապետության Ստատիստիկական կոմիտեի հրապարակման համար 01-02-03/18 հաշվառման և վարկառության կապիտալի մասին տվյալների հավաքագրման համար 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Յուցակ կազմելուց յետոյ բնօանիքի մեջ ենյի ունեցած փոփոխութիւնք.			Ծանօթութիւն
Ծնունդ. տարի, ա- միս և ամ- սաթիւ	Պատկ. տարի, ամիս և ամ- սաթիւ	Մահ. տարի, ամիս և ամ- սաթիւ	

U U S E U V

Եկեղեցու..... քաղաքի (կամ գիւղի)

ԿԱՅՔԻ ԳՈՅՔԻ ԵՒ ԴՐԱՄԱԳԼԽԻ (ԻՆՎԵՆՏԱՐ)

Կաղմուած 191 թուին

[illegible]

ՀՀ Ազգային գրադարան



NL0161977

ԳԻՆԵ Է 20 ԿՈՍՂ.